որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ պետական տուրքը գանձվում է բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև պետական տուրքի գումարը, որը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով: Նման հաշվարկի հիման վրա է որոշվում օրենքով սահմանված և պարտադիր վճարման ենթակա պետական տուրքի չափը:

Տվյալ պարագայում Հայցվորի կողմից նախապես վճարվել է 50,000 ՀՀ դրամի չափով պետական տուրք, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ ելնելով բավարարված պահանջների համամասնության կարգով պետական տուրքի բռնագանձման սկզբունքից:

## (IV) Եզրափակիչ մաս

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 109-րդ, 179-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով և 27.2-րդ գլխով՝

## Վ Ճ Ռ Ե Ց

1. «ՎԵԲԷՔՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ ազգային անվտանգության ծառայության՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի՝ 08.01.2024 թվականի թիվ 20/12 որոշումը՝ «ՎԵԲԷՔՍ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ՝** **Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____:

**ԴԱՏԱՎՈՐ՝** **Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**